Ցապանաքար մի տեսայ քօլոզի ձևով. մի հատ ևս թուրքի փաթթոցաւոր գլխարկի ձևով ևն. ևն։ Գերեզմանատանս արևելեան կողմն 100—150—200 մեթր հեռիներն հողի տակից նաև գտնուած են սրբատաշ գերեզմանաքարինք, գինւոյ կարասներ, միւռոնի շիշ...։ «Տէր Դաւիթ»ի[1] գերեզման մի կայ խորանի առջև, ուստի բարեպաշտ հայեր հող կը տանեն՝ հիւանդաց բժշկութեան և իւրեանց արտերն ցանելու համար, որպէս զի բերքը առատ լինի, անապականելի մնայ։

Եկեղեցւոյս յատակն դարաններ են եղած և շատ խոր։

Ծերք կը պատմեն թէ.—եղեկեցւոյս զօրքը շատ է, չուխտակ վերին (վայրի ոչխար) կիգէր, զուր գլուխ վրը շեման կը դնէր ու զուր կը մատղէր ... և թէ տարուէ տարի եղնիկներու եղջիւրներն եկեղեցւոյ որմի վերայ կը տնկուէր, առ ի յիշատակ հրաշագործութեան. մի օր այս եղջիւրներու վերայ թռչուն մի կը թառի, այս գիւղը գտնուած Ենկի—Զէրի աղասին հրացանը կուղղէ որ գնդակով սպաննէ թռչնոյն, հայք կրգուշացնեն, նա չը լսեր, Ենկի—Զէրին հրացան արձակէն ու ընկնալն մէկ կը լինի. փրփուրներու մէջ կը թաւալի. փափաք կը յայտնէ եկեղեցւոյն զոհ մատուցանել՝ բայց դեռ չարած՝ հողին կը փչէ։

Նաև ծերք կը պատմեն թէ եկեղեցւոյ խորանից դէպի հիւսիսային յարևելս մի կամար կար և թէ այս կամարը 150 մեթր երկայնք ունէր, որոյ վերայէն ևս ճանապարհ կար՝ գիւղացիք իրենց գործին գնալու համար. կամարի

---

1. Որչափ կը յիշեմ՝ Բագրեւանդից Դաւիթ անուամբ մի մատենագիր լինելու է ի նախնիս։